Ելույթ

Ռազմավարական էկոլոգիական գնահատումը հանդիսանում է կարևորագույն գործիք որը թույլ է տալիս ապահովել, որ պլանների և նախագծերի մշակման ընթացքում շրջակա միջավայրի և մարդու առողջության վերաբերյալ նկատառումները մանրակրկտորեն հաշվի են առնվեն:

ՌԷԳ-ը խթանում է կայուն զարգացումը՝ տնտեսական և սոցիալական զարգացման մեջ բնապահպանական հարցերի լայնորեն ներգրրավման, ինչպես նաև ռազմավարական որոշումների կայացման գործընթացում կանաչ տնտեսության և կայուն զարգացման նպատակների ինտեգրման միջոցով:

Հայաստանի Հանրապետությունը 2011 թվականին վավերացրել է Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին Էսպո կոնվենցիայի Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին արձանագրությունը: Արձանագրության և կոնվենցիայի իրականացման նպատակով 2013 թականին մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» օրենքի նախագիծը, որով դրվել է Արձանագրության դրույթներին հասմապատասխան՝ պլանների և նախագծերի համար ՌԷԳ-ի անցկացման հիմքը:

Հայաստանում ՌԷԳ արձանագրության իրականացմանը աջակցելու նպատակով 2013 թվականի նոյեմբերին անց է կացվել 4-օրյա ուսուցողական սեմինար: Սեմինարը կազմակերպվել էր Հայաստանի խնդրանքով ՄԱԿ-ի ԵՏՀ կողմից և իրականացվել է բնապահպանության նախարարության և Էկոգլոբ հասարակական կազմակերպության համագործակցությամբ: Սեմինարին մասնակցել են պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և բիզնես/մասնավոր հատվածի ներկայացուցիչները:

Սեմինարի նպատակներն էին .

-մասնակիցներին՝ ՌԷԳ-ի կիրառման վերաբերյալ մանրամասն առաջարկությունների ներկայացումը, այդ թվում նաև այդ գործընթացում հասարակության մասնակցության դերի վերաբերյալ,

- մասնագետների վերապատրաստում՝ ՌԷԳ պիլոտային ծրագրում փորձագետներ աշխատալեու համար և 2014-2016 թվականներին նախատեսված մի շարք այլ միջոցառումներին մասնակցելու նպատակով:

Սեմինարը շատ արդյունավետ էր և ունեցավ արգասաբեր արդյունքներ:

Դրանից հետո EAP GREEN ծրագրի շրջանակներում 2014-2015 թվականներին միջազգային փորձագետների մասնակցությամբ իրականացվել է ՌԷԳ և ՇՄԱԳ գործընթացների օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակի վերանայում:

Բանն այն է, որ 2014 թվականին ընդունված օրենքում՝ ՇՄԱԳ և ՌԷԳ իրավական կարգավորումները ներառել են մի հոդվածի տակ: Այդ պատճառով խորհուրդ է տրվել ՇՄԱԳ և ՌԷԳ կարգավորումները տարանջատել առանձին հոդվածների:

Դրանից հետո Հայաստանը EAP GREEN ծրագրի շրջանակներում քարտուղարության աջակցությամբ իրականացվել են հետևյալ 2 նախագծերը:

-Հայաստանում կոշտ թափոնների կառավարման ոլորտի երկարաժամկետ նեդրումային պլանի ճանապարհային քարտեզի ռազմավարական զարգացման պլանի պիլոտային ծրագիրը

- 2014 թվականին ընդունված օրենքի վերլուծություն և փոփոխությունների մշակումը

Պիլոտային ՌԷԳ-ը իրականացվել է 2016-2017 թվականներին: Պիլոտային ՌԷԳ-ը հնարավորություն տվեց շահագրգիռ կողմերին պրակտիկ փորձի վրա հասկանալ ՌԷԳ-ի բոլոր քայլերը: Այդ ընթացքում ազգային փորձագետների թիմը և այլ մասնակիցներ մասնակցել են 2 ուսուցողական սեմինարների:

Բացի Հայաստանում կոշտ թափոնների կառավարման ոլորտի զարգացման պլանի վերաբերյալ աաջարկությունների ներկայացումից, պիլոտային

ծրագրի շրջանակներում ձեռք բերված փորձը օգտագործվել է օրենքի փոփոխությունների և ՌԷԳ-ի վերաբերյալ կառավարության որոշման մշակման ժամանակ:

Օրենքում փոփոխություններ կատարելու գործընթացի շրջանակներում շահագրգիռ կողմերի համար կազմակերպվել են 2 կլոր սեղան քննարկումներ, որոնց արդյունքում օրենքի փոփոխությունները և կառավարության որոշման նախագիծը լրամշակվել են 2017 թվականի ապրիլին: Այս երկու ծրագրերը և դրանց շրջանակներում իրականացված մի շարք միջոցառումներ հաջողությամբ իրականացվել են բնապահպանության նախարարության և Կովկասի տարածաշրջանային բնահպանական կենտրոնի համագործակցությամբ:

Ուզում եմ նշել որ 2017 թվականից հետո ինչ ինչ հանգամանքների պատճառով վերանայված օրենքը այդպես էլ չի ընդունվել և մինչ օրս լրամշակվում է:

- Այժմ ինչ վերաբերում է ԵՄ շրջակա միջավայրի համար ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումներին: Ծրագրի շրջանակներում մշակվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կիրառման ուղեցույցը: Փաստաթուղթը շատ օգտակար գործիք կլինի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը ճիշտ և արդյունավետ իրականացնելու համար: Ուղեցույցը կօգնի ազգային շահագրգիռ կողմերին պատրաստել և վերանայել ՇՄԱԳ փաստաթղթերի որակը և կիրառել Էսպոյի կոնվենցիան և համապատասխան ազգային օրենսդրությունը: Նոր օրենքի ընդունումից հետո, նախատեսվում է մշակված ուղեցույցը համապատասխանեցնել օրենսդրությանը և հաստատել իրավական ակտով:

Հայաստանը մասնակցել է 2 առցանց տարածարջանային սեմինարներին 2020 և 2022 թվականներին: Առաջին սեմինարը նվիրված էր ՌԷԳ-ի և անդրսահմանային ՇՄԱԳ-ի ոլորտում փորձի փոխանակմանը: Սեմինարի ընթացքում քննարկվել են նաև երկրների կողմից ներկայացված արդի հարցադրումները և ներկայացվել են առաջադեմ փորձի օրինակներ:

2-րդ սեմինարի ընթացքում մասնակից երկրները ներկայացրել են ՌԷԳ-ի և անդրսահմանային ՇՄԱԳ-ի պրակտիկ ներդրման հետ կապված խնիդրները և ձեռքբերումները: Ներկայումս Հայաստանում մեկնարկել է Գեղարքունիքի մարզի «Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական

պլանավորման» (Գեղարքունիք-2) ռազմավարական էկոլոգիական գնահատման պիլոտային ծրագիրը: Պիլոտային ծրագրի առաջին փուլում շրջակա միջավայրի նախարարության հետ սերտ համագործակցության շրջանակներում շրջակա միջավայրի փոխնախարար Տիգրան Գաբրիելյանի ղեկավարությամբ ձևավորվել է փորձագետների խումբը, որը 1-ին փուլում կատարել է իր առջև դրված բոլոր խնդիրները:

Վերոնշյալ հետևողական և արդյունավետ մի շարք միջոցառումների իրականացման արդյունքում Հայաստանում ձևավորվել է ՌԷԳ-ի պատշաճ անցկացման մասնագիտական պոտենցիալ, որի հաջող զարգացումը թույլ կտա էական առաջընթաց արձանագրել ՌԷԳ արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների իրականացման համատեքստում: